

**Վիսքյու դեղով բուժման Ձեր ուղեցույցը**  
**(բրուլուցիզումաբ)**

**Նեովասկուլյար (թաց) տարիքային մակուլյար դեգեներացիայի**  
**(ՏՄԴ) բուժման համար**

**Ինչ է նեովասկուլյար (թաց) տարիքային մակուլյար դեգեներացիան (ՏՄԴ)**

Պատրաստման ամսաթիվը՝ հունիս 2022թ  
Տարբերակի համարը՝ 481191/VSI/A4/06.2022/240 v8.1  
Հրատարակված՝ սեպտեմբեր 2022  
Քանակը՝ 240

«Օգնություն բուժախսատողին. Թողարկվել է որպես Ռիսկերի Կառավարման Պլանի մաս: Սա գովազդային նյութ չէ:

Նախքան դեղը նշանակելը, խնդրում ենք կարդալ բժշկական օգտագործման հրահանգները»:

Թաց տարիքային մակույթար դեգեներացիան առաջանում է, երբ մակուլայի տակ ձևավորվում և զարգանում են ոչ նորմալ արյունատար անոթներ: Մակուլան, որը տեղակայված է աչքի հետին մասում պատասխանատու է հստակ տեսողության համար: Ոչ նորմալ արյունատար անոթներից կարող է հեղուկ կամ արյուն արտահոսել աչքի մեջ և խոչընդոտել մակուլայի գործառույթին՝ հանգեցնելով տեսողության նվազման:

### **Ինչու է ինձ նշանակվել Վիսքյու**

Վիսքյու դեղը պարունակում է բրոլուցիգումբ ակտիվ նյութը, որը պատկանում է հականեովասկուլյարիզացնող կոչվող դեղերի խմբին:

Անոթային էնդոթելիալ աճի գործոն A (VEGF-A) կոչվող նյութը խթանում է աչքի արյունատար անոթների աճը: Վիսքյուն արգելակում է VEGF-A նյութի ազդեցությունը և նվազեցնում է ոչ նորմալ արյունատար անոթների աճը թաց տարիքային մակույթար դեգեներացիայի դեպքում, ինչն էլ իր հերթին նվազեցնում է հեղուկի կամ արյան արտահոսքը աչքի մեջ:

### **Ինչպես է կիրառվում Վիսքյուն**

Վիսքյու դեղը ներարկվում է աչքի մեջ (ինտրավիտրեալ ներարկում) Ձեր բժշկի կողմից

Ներարկումից հետո Ձեր բժիշկը կանցկացնի աչքի որոշ հետազոտություններ: Այդ հետազոտությունները կարող են ներառել աչքի ճնշման չափումը կամ օպտիկական նյարդի վիճակի գնահատումը:

### **Ինչ սպասել բուժումից հետո**

• Երբեմն ինտրավիտրեալ ներարկումից հետո, ինչպիսին է Վիսքյու դեղի ներարկումը, կարող է առաջանալ հետևյալը՝

Պատրաստման ամսաթիվը՝ հունիս 2022թ  
Տարբերակի համարը՝ 481191/VSI/A4/06.2022/240 v8.1  
Հրատարակված՝ սեպտեմբեր 2022  
Քանակը՝ 240

«Օգնություն բուժախատողին. Թողարկվել է որպես Ռիսկերի Կառավարման Պլանի մաս: Սա գովազդային նյութ չէ:

Նախքան դեղը նշանակելը, խնդրում ենք կարդալ բժշկական օգտագործման հրահանգները»:

Հազվադեպ, բայց ծանր բորբոքում (էնդոֆթալմիտ), որը սովորաբար կապված է աչքի ներսում վարակի, կամ աչքի հետին մասում տեղակայված թաղանթներից որևէ մեկի շերտազատման հետ, (ցանցաթաղանթի շերտազատում/պատռվածք):

Աչքի ճնշման ժամանակավոր բարձրացում (ներակնային ճնշում), որը հաճախ, սակայն սովորաբար առանց ախտանիշների հանդիպող երևույթ է և այն հայտնաբերելու համար բժիշկը պետք է կատարի աչքի ճնշման չափում:

#### Կարևոր ռիսկերի մասին տեղեկատվություն

- Կարող են ի հայտ գալ ցանցաթաղանթում արյունատար անոթների բորբոքում (ցանցաթաղանթի վասկուլիտ) և/կամ աչքի հետին մասում արյունատար անոթների խցանում (ցանցաթաղանթի անոթների օկլյուզիա), կամ աչքի մեջ միջին ծանրության բորբոքում (ներակնային բորբոքում): Դուք կարող եք առավել ռիսկային լինել, եթե կին եք կամ ազգությամբ Ճապոնացի:

- Եթե ունեցել եք ներակնային բորբոքում և/կամ ցանցաթաղանթի անոթների օկլյուզիա վերջին մեկ տարում, Դուք ցանցաթաղանթի վասկուլիտի և/կամ ցանցաթաղանթի անոթների օկլյուզիայի զարգացման առավել ռիսկային խմբում եք:

Հնարավոր է իմունային պատասխան (իմունոգենություն),

#### **Ինչ սպասել բուժումից հետո**

• Անհապաղ դիմեք Ձեր բժշկին, եթե ունեք այս ախտանիշներից որևէ մեկը՝

- Տեսողության հանկարծակի նվազում կամ փոփոխություն

-Նոր կամ առկա լողացող մասնիկների քանակի աճ (տեսողության մեջ փոքր մասնիկներ)

-Աչքի ընդհանուր կարմրություն

- Նոր ի հայտ եկած կամ մշտական աչքի ցավ կամ աչքում անհարմարավետության զգացողության սրացում

Պատրաստման ամսաթիվը՝ հունիս 2022թ  
Տարբերակի համարը՝ 481191/VSI/A4/06.2022/240 v8.1  
Հրատարակված՝ սեպտեմբեր 2022  
Քանակը՝ 240

«Օգնություն բուժախատողին. Թողարկվել է որպես Ռիսկերի Կառավարման Պլանի մաս: Սա գովազդային նյութ չէ:

Նախքան դեղը նշանակելը, խնդրում ենք կարդալ բժշկական օգտագործման հրահանգները»:

- լույսի կայծեր կամ լույսի նկատմամբ զգայունության բարձրացում (անհարմարավետություն պայծառ լույսից)

### **Ինչ կարող եմ անել բուժումից հետո**

• Ներարկումը կարող է ժամանակավոր ազդել Ձեր տեսողության վրա (օրինակ, պղտորված տեսողություն): Մի վարեք մեքենա կամ մի աշխատեք սարքավորումների հետ, քանի դեռ այս կողմնակի ազդեցությունները շարունակվում են:

Եղեք նախաձեռնող և իրազեկեք Ձեր բժշկին կամ բուժքրոջը, եթե նկատում եք տեսողության փոփոխություններ:

• Կարևոր է պահպանել Ձեր բժշկի կողմից առաջարկված այցելությունների ժամանակացույցը:

### **Ինչպես կապ հաստատել ակնաբուժական կենտրոնի հետ**

Կոնտակտ՝ \_\_\_\_\_  
Հեռ.՝ \_\_\_\_\_  
Հասցե՝ \_\_\_\_\_  
Էլ. հասցե՝ \_\_\_\_\_

Եթե Դուք նկատեք կողմնակի ազդեցության դեպքեր, խորհրդակցե՛ք Ձեր բժշկի, բուժքրոջ կամ դեղագետի հետ: Դա վերաբերվում է նաև այն կողմնակի ազդեցության դեպքերին, որոնք նկարագրված չեն ներդիր թերթիկում, և որոնք զարգացել են Վիսքյու (բրոուզիգումաբ) դեղի օգտագործման ժամանակ: Դուք կարող եք կողմնակի ազդեցության մասին ուղղակիորեն առցանց հաղորդել ՀՀ ԱՆ ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն՝ հետևյալ հղումով. [www.pharm.am](http://www.pharm.am) կամ զանգահարել թեժ գիծ՝ հեռախոսահամարներ. (+374 10) 20 05 05 և (+374 96) 22 05 05:

Պատրաստման ամսաթիվը՝ հունիս 2022թ  
Տարբերակի համարը՝ 481191/VSI/A4/06.2022/240 v8.1  
Հրատարակված՝ սեպտեմբեր 2022  
Քանակը՝ 240

«Օգնություն բուժախատողին. Թողարկվել է որպես Ռիսկերի Կառավարման Պլանի մաս: Սա գովազդային նյութ չէ:  
Նախքան դեղը նշանակելը, խնդրում ենք կարդալ բժշկական օգտագործման հրահանգները»:

Կողմնակի ազդեցությունները հաղորդելու համար դիմեք նաև Նովարտիս  
ընկերությունների խմբի դեղագործական հսկողության բաժին

Հեռ.՝ (+374 11) 51 90 70

Էլեկտրոնային փոստի հասցե՝ [drugsafety.cis@novartis.com](mailto:drugsafety.cis@novartis.com)

Պատրաստման ամսաթիվը՝ հունիս 2022թ  
Տարբերակի համարը՝ 481191/VSI/A4/06.2022/240 v8.1  
Հրատարակված՝ սեպտեմբեր 2022  
Քանակը՝ 240

«Օգնություն բուժախսատողին. Թողարկվել է որպես Ռիսկերի Կառավարման Պլանի մաս: Սա  
գովազդային նյութ չէ:

Նախքան դեղը նշանակելը, խնդրում ենք կարդալ բժշկական օգտագործման հրահանգները»: